

թարկել սոցիալ-դեմօկրատական շարժման յեղափոխական ընույթը:

3. Անցքերը, ըստ երևոյթին, վկայում են, որ սոցիալ-դեմօկրատները սխալ գործեցին, բոյկոտ յայտարարելով առաջին Դումային, այդ պատճառով յիշեալ փորձը պէտք է որ նրան թելադրէր ներգործական մամնակցութիւն առաջիկայ ընտրութիւններում, անկախ—ամենուրեք, ուր այդ կարելի կը լինի, և այլ դէպքերում՝ բուրժուազական օպպոզիցիայի հետ միասին»:

Բերելով այս քաղուածքները մենք կը ցանկանայինք որ այս կարծիքները դաստիարակող ազգեցութիւն ունենային մեր այն սոցիալ-դէմօկրատների վրայ, որոնք իրեն մտածողութեամբ ու աեմպերամենտով աւելի շուտ դաւադիր—յեղախոխականներ և անարիխստներ են, քան Մարքսի աշակերտներ:

8.

## ՀՅՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ ՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԵՐԻՑ

### I

Զինուորական թանգարաններում կարելի է երբեմն հանդիպել երկաթեայ ծանր ուազմազգեստով զարդարուած միջնադարեան առաքեածների մոնեկէնների, որոնց արտաքինն արդէն ներշնչում է դիտողին զարմանք և երկիրդ բոռւնցքային իրաւունքի դարեշրջանի այն քարացած արձանի առջև։ Որքան դժբախտ են եղել սրանց ժամանակակիցները, որ հենց այս սոսկալի բարպանի տակ դարեր տանջուել են միայն շնորհիւ այն հանգամանքի, որ անկարող են եղել բողոքելու գիշատիչ քարունների ու սրանց մանկաւիկների վոնմակների դէմ և թաղցրել են մինչև գերեզման իրենց արտասուքները։

Բայց բաւական էր վերցնել նրանց վրայից այդ իրոխտ մետաղեայ զրահը, բաւական էր հասարակ որսորդ Վիլհելմ Տէլի աներկիւդ կոչը յանուն ժողովրդական ազատութեան, որպէսովի

աւատրիական ինքնակալ ու հզօր ասպետների ընտիր բանակը ջարդուէր գիւղացիների բրիչների, փողխերի ու բահերի գիւմաց:

Մեր ժամանակը նոյնպէս հարուստ է այդ տեսակ մոնեկներով, սակայն սրանք կենդանի էակներ են զրահաւոր ուած մոսիններով, մառէրներով ու նազաններով. լանջապանակի տեղ սրանք ծածկում են գեղազարդ փամփշտակալներով ու նիզակի տեղ ափի մէջ ամուր սեղմում շառաչող մըտրակն ու կնուտը, ի՞ո՞նչ փոյթ, թէ այդ ասպետների անունը կնքուած կը լինի ուսւ թէ «ազգային կողակ» անունով. երկուսի դերը միանդամայն հոմանիշ է Գիւղերը սարսափում են երկուսի ստուերից, և ամեն անգամ մի կերպ ազատուելով հարիւրակներից կամ Փիդայիների խմբերից՝ շինականները վիշեր են փշուու, աղերսելով երկնքին հեռու պահել հայ գիւղերը այդ պատուհասից ու գուլումից: Զանգեղուրում հրէշ Շիրին հրամանատարի յետևից սարսափած գիւղացիները գոշում էին. «հրաժարիմքի սատանայէ», և այդ խմբերը պաշտպանում էին հայոց աշխարհը ճիշտ նոյն մեթոդով, ինչպէս որ միջնադարում կայսերական ու պապական զօրքերը՝ հռովմէական սրբազն կոյսյերութիւնը:

Յիշում էր, ընթերցնողը, շատ մօտ անցեալը, երբ մեսելային լոռութիւն էր սիրում մամուլի մէջ «ազգային կառավարութեան» հերոսների մասին և դաշնակցական թերթերը, թերթիկներն ու թառցիկները ծունկ չոքած խունկ էին ծխում իրենց Մելիքների, Շիրինների, Գէորգների և ուրիշների մշուշապատ դէմքերի առաջ, դիֆիրամբներ մոգոնում նրանց հասցէին և յայտարարում, որ նրանց սրբազն գործունէութիւնը նոյնքան պայծառ ու անարատ է, որքան և արեգակի լոյսը, որ ժողովուրդն երջանիկ զգալով իրեն դաշնակցութեան դրօշի և սրա րիգիմենտի տակ, ուրախութեմար կնքում էի ւրանունը «դաշնակցական»: Յիշում էր Սուրբ Դաշնակցութեան մայրերին ու քոյրերին, երբ նրանք զգայուն ու արտասուալից հայեցքներով լուսւ էին ազգային փրկիչների դիւցազնութիւնները մեծ պատիկ ու պրոֆեսիօնալ ճառախօսների բերնից և գուշում. «Միթէ կարելի է հայ լինել և ոչ դաշնակցակական:»

Սակայն հարբեցողութեան օրերն անցան և հիացման հմայքը չքացաւ գաւառներում թափուած արեան ծովի մէջ. Մղձաւանջը խեղդում էր բոլորիս կուրծքը, բայց ամենից ուժեղ տիրապետում էր հասարակական կեանքի հրապարակին կազմ ու պատրաստ դաշնակցական զինուորական բիւրոկրատ-

իւն իւր գօրքով, դատարաններով, բանդերով, պատժական արշաւանքներով:

Եղկելի օրեր, երբ ամեն մի յեղափոխական տեսնում էր, թէ ինչպէս ցեղափոխութեան վահանով քօղարկուած մի կուսակցութիւն ի մի ձուկելով իւր զրօշի տակ դժբախտ հայրենիքի բոլոր ազռաւաներին<sup>1)</sup>, հետզհետէ իւրացնում էր տւագակային բնազդներ և խեղդում ամեն տեղ, ամեն վայրում ժողովրդական բողոքի ամենաթոյլ նշոյլն անզամ, երբ գիւղերում նրա ագենտներն անամօթարար էկովրոպրիացիայի էին հնաթարկում ուրիշի շարժուն, երբեմն կենդանի գոյքը և իրենց մտրակների սուլոցով խլացնում տառապողների հառաջը, երբ նոյնիսկ կազմակերպուած ներկայացուցչական ժողովների յամառ ու խիստ պայքարը դաշնակցական բիւրոկրատիզմի և դուլգուրկրատիզմի դէմ ազգային իշխանների ամենախիստ դիմադրութեան էր հանդիպում, երբ մի խօսքով՝ սորկութեան շղթաներով կապկապուած ժողովուրդը, տեսնելով ազգային յեղափոխականների այդ էկովերիմենտները, միանգամայն կորցնում էր յեղափոխուելու իւր ախորժակը և ձգտում իւր ցաւագին ու դժբախտ գլուխը խոնարհեցնել պետական, թէաէտև բիւրօկրատիական իշխանութեան առաջ:

Բայց ահա կամաց կամաց մամուլը սկսում է պատռել մթին ու մոայլ իրականութեան քօղը. նետում են հրապարակ անվեներ գրիչներ, որոնք բարձրացնում են դաշնակցական պոլիցիական կառավարութեան վարագոյրը և օդը թնդում է կեղծ, ողբերգակ Փրէյլինցիների խլացուցիչ հայնոյախառն բացականչութիւններից:

Կատաղի ածականներ էին ժայթքում դաշնակցական հրաբուխները. «զուք զաւաճաններ էր, լրախներ, զրպարտիչներ, սրիկաններ, ստորներ, պրովակատորներ. զուք ստում էր, կեղծում կուրացած կուսակցական շահամուլութեամբ» և այլ շքեղազարդ գրական գոհարներ էին թափուում սրանց գոզուած ու խոցոտուած գրիչների տակից: «Հայ ժողովրդի աշխատաւոր մասսանների» ամբողջ հայ ազգաբնակութեան 90 %-ը հպարտ քայլում է դաշնակցութեան դրօշակի տակ, փառաբանում նրա հերոսների յիշատակը, ուրախանում նրանց անշահամութիւնից, աղնուութիւնից ու անձնուէր գործունէու-

<sup>1)</sup> Պատլիկ ու փամփլիկ բուրժուացներին, հացի, կենսամթերքների ու զբամի վաշխառուներին, յեղափոխութեան ուրուականից փախչող կուլուածաէրերին ու Փէօդալներին, զէնք ու առզմամթերք վաճառողներին և ընդունակ խուլիդաններին, գրգռելով դրանց գիշատիչ անյատակ ախորժակը.

թիւնից. գաշնակցութեան կամքը ժողովրդի կամքն է և ով կը համարձակուի հակառակ ընթանալ այդ կամքին, կը յայտաբարուի դաւաճան և կը ստանայ համապատասխան պատիժ։ ահա դաշնակցական մամուլի բովանդակութիւնը կէս տարի առաջ՝ իսկ այսօք. վերցրէք, թերթեցէք ՇՅԱՊԻՉՅԱՆՔ ԵՐԿԻՐ=ՓԱՄԱՆԱԿԻՐ համարները, տեսէք, ինչ խոստովանանքներ են հետզհետէ սպրառում նրանց էջերում, ինչպէս դաշնակցութեան գրական մոլորակները ստիպուած լինելով հաշտուել անհերքելի փաստերի հետ, ինտոռում են հետզհետէ մեղմացուցիչ դէպք յանցանաց, արդարանալու երկաթեայ օղակներով նրան սեղմող օպլովիցիօն մամուլի ներկայացուցիչների առաջ։ Գաւառական բաղաքներում կը կին անգամ կենդանանում է պայքարը, և ամեն կողմից, ամեն անկիւնից հնչում են բողոքներ ու ձայններ, թէ բաւական է որքան բռնութիւններ են կատարուել. ժամանակ է յանձնել ինքնապաշտպանութեան գործն իրեն ժողովրդին։

Ի հարկէ, մի խաւար բիւրօկրատիական կազմակերպութիւն հազիւ թէ կարողանար դիմանալ գիտակից տարրերի այս զօրեղ արշաւանքին. պէտք էր այս կամ այն կերպ բաւարութիւն տալ ժողովրդի խիստ դժգոհութեան. պէտք էր նրան «ազատութիւն» շնորհել: Եւ ահա դաշնակցութեան մամուլը փոխում է իւր նէյնիմները ու հայ ժողովրդի գնդակի ու մորակի սուլոցին սովորած ականջը սկսում են շօյել անոյշ մեղեդիներ Երանէ քեզ, ապօապեալ ժողովուրդ. քեզ կամենում են նուիրել սահմանադրութիւն. այսուհետեւ ազատ կը զգասքեզ և ինքդ կը կառավարես քո գործը...»

Բայց այսանդ էլ, ինչպէս յատուկ է միայն ուժի ու բողոքի առաջ խոնարհող խորամանկ բիւրօկրատներին, դաշնակցական մամուլի շէֆերը հնչեցնում են փողերը, թէ իւրենց խիստ պատասխանատու ու սրբազն դերը կատարած են համարում այս արիւնոտ շրջանում, պաշտպանելով անզէն ու անպատրաստ ժողովրդին վերջնական կորստեան ճանկերից. թըքի խէնչալից ու գնդակից, իսկ այժմ, ինչպէս վայել է մի յեղափոխական կուսակցութեան՝ որոշել են յօժարակամ յանձնել ինքնապաշտպանութիւնը ժողովրդին։

Կեղծող փարիսեցիներ։

## II

Անցնենք Շուշու իրականութեան։ Այստեղ էլ «Ապառաժ»-ը որոշեց յանձնել ինքնապաշտպանութիւնը ժողովրդին։ Այ-

ստեղ էլ թաղային ժողովներում, որոնք հասարակ մասնիկներ են դաշնակցական բիւրօկրատիայի ահազին մեքհնայի մէջ ու զուրկ ինքնորոշման ամեն մի նշոյլից, պրոֆեսիոնալ ճառախօսներն ու ջատագովները սիրազեղուն ոճով ու քաղցրավի ժպիտներով դրուատեցին դաշնակցութեան ազնիւ ցանկութիւնը և առաջարկեցին ամեն մի թաղի հեղ հօտին ընտրել 15 հոգի քաղաքացիներ, որոնց ընդհանուր ցուցակից կրկին անդամ պիտի զտուէր ժողովրդական ընտրութիւններով մի գործադիր մարմին քաղկացած 15 հոգուց:

Հինգ թաղերում էլ հնչում էին գեղեցիկ խոստումներ. գործադիր մարմին ընտրութիւնները, ասում էին, կայանալու է քառանգամ սիստեմով. դաշնակցութիւնը կը յանձնի նրան իր հաշիւներն ու վերջին հրաժեշտը կը տայ ինքնապաշտպանութեան գործին:

Շուտով ժողովուրդը կը լինի իր գլխի տէրը, իր կեանք ու գոյքի պաշտպանը և այլն \*): Այնուհետև քաղաքում սկըսում են պտտեցնել համարներով նշանակած թերթիկներ, որնց վրայ տպած էին թաղային ժողովներում ընտրած 49 թեկնածուի անունները: Թաղաքացիները պարտաւոր էին խաչերով նշանակել ցանկացած 15 հոգուն: Ընդհանուր քուէարկութեան արդիւնքը ցոյց կը տար երջանիկ խորհրդի կազմը:

Իր ժամանակին ընթերցողներն երկի ծանօթացած կը լինեն զանազան թղթակցութիւններից այդ «աչքակապուկային» ընտրութիւնների հետ: Թէ ի՞նչ ազօրինութիւններ են կատարուել դաշնակցութեան ծրագրով կատարուած այդ «փնամակալուած» և աշառու ընտրութիւնների շուրջը, մեզ համար միանգամայն անհետագրքիր են: Փաստն այն է, որ ընտրութիւնները վերջացել են, և ոլարգուած է քուէարկութեան հետեւանքը:

Սակայն նոր խորհրդի Ա. Նիստում տարածայնութիւններ են առաջանում դաշնակցութեան տեղական ականաւոր գործիչ

\*) Այս թաղային ժողովներով վերջացաւ դաշնակցութեան նախընարոկան ագիտացիան: Ի զէպս պէտք է ասել, որ ինքնապաշտպանութեան և այլ ինդիքների մասին ագիտացիա մղելու հարաւորութիւն չունին միւս կուսակցութիւնները, ոչ այնքան շնորհիւ պատերազմական դրութեան, որքան դաշնակցութեան զարդացած շպիօնագին, որ աշարութ հըսկում է իր խնամքին յանձնած հեղ հօտի ամեն մի շարժումը: Թաղային պաշտօնական ժողովներում էլ միանգամայն անկարելի է ազատ քննադատել և ուրբագետներից անզմական տակտիկայի շնորհիւ: Մաքի ազատ մրցման ճանապարհը կտրւում է այսպիսով մեր նուաճուած իրականութեան մէջ անանցանելի ամբարտակներով:

Վ.՝ի հրաժարականի պատճառով։ Նրա օրինակին ցանկութիւն են յայտնում հետևել նաև մի քանի անդամներ։ Դրութիւնը լրջանում է, և 15-ի խորհուրդը որոշում է գումարել առանձին հրաւիրաթղթով աչքի ընկնող քաղաքացիներին խորհրդակցութեան։ Դեկտ.-ի 26-ին տեղի է ունեցած խառը ժողովին ներկայ էին մօտ 60 հոգի, խորհրդով և գաշնակցութեան ներկայացուցիչներով հանդերձ։ այստեղ, ժողովում, տեղի են ունենում դաշնակցութեան զօրավարի հոչչակառը խոստովանութիւնները, որոնց վրայ կէտ առ կէտ այժմ կենդրոնացնենք մեր ուշադրութիւնը։

## III

Զօրավարը յայտաբարում է, որ այս ընտրութիւններն երկու սեռերի հաւասար մասնակցութեամբ քառանդամ սիստեմի գործադրութեան միակ և առաջին օրինակն է Ռուսաստանի պատմութեան մէջ և որ այդ անդուգական գործը կատարուեց, ի պատիւ յեղափոխական դաշնակցութեան, վերջինիս զեկավարութեան տակ։ Դաշնակցութիւնն ուրեմն դիմել է այն հանապարհին, որին սովորաբար ձգտում են դիմելու բոլոր միւս յեղափոխական կուսակցութիւնները, ապա ուրեմն նրա կատարած գերը միանգամայն յեղափոխական է։ Թնանք մի առ մի։ Իրաւ այդ ընտրութիւնները քառանդամ սիստեմով են կատարուած, թէ սա մի սիրուն, ճռճռան ֆրազաբանութիւն էր ժողովրդի առջև յեղափոխական փետուրներով ներկայանալու։

Ինչպէս յայտնի է, քառանդամ սիստեմ ասելով հասկանում ենք ընտրողական ձեփ չորս անբաժան ֆունկցիաներ՝ ուղղակի, գաղտնի, ընդհանուր և հաւասար քուէարկութիւն։

ա. Ընտրութիւններն ուղակի չեն կարող համարուել, քանի որ թեկնածուների ցուցակը կազմուել է թաղային ժողովներում և ապա այդ թեկնածուների սահմանափակ ցուցակով ժողովուրդը ստիպուած էր առաջնորդուել ընտրութիւնների ժամանակ։ Նոյն իսկ թեկնածուների մի մասին քուէարկութեան են ենթարկել առանց նրանց համաձայնութիւնն առնելու։ Մինչդեռ քառանդամ սիստեմը պահանջում է, որ ցանկացողներն անմիջապէս դնեն իրենց թեկնածութիւնը, իսկ այնուհետև ժողովուրդն ազատ է ընտրելու նրանց միջից իր ցանկացածներին։

բ. Ընտրութիւնները գաղտնի չեն եղել, այլ պարզ, որովհետև ընտրողական թերթիկների ծայրին կային համար-

ուր որոնցով հեշտ կարելի է իմասնալ, թէ ով, ում է ձայն տուել:

գ. Ընտրութիւններն ընդհանուր չեն եղել, որովհետեւ ցրուած թերթիկների քանակն եղել է մօտ 300-ը (ինչպէս յայտնեցին ժողովուած), մինչդեռ 20 տարեկան հասակից սկսած Շուշում երկու սեռից կարելի է հաշուել մօտ 5000 հոգի: Ես յենուում եմ հետևեալ թուերի վրայ՝ 1887 թ.-ի ստատիստական տեղեկութիւնների մէջ Շուշում հայ աղջաբնակութեան թիւը հասնում էր 15,180 հոգու (8712 տղամ. 6448 կին): Դժբաղդաբար ձեռքիս տակ չունիմ 1897 թ.-ի ընդհանուր վիճակագրական տեղեկութիւնները, որպէսզի կարելի լինէր աւելի մօտ անցեալից վերցնել այն թուերը:

Ամենայն հաւանականութեամբ ազգաբնակութեան քանակը անմիջապէս մինչև կոտորածները շատ չնշին փոփոխութիւնների է ենթարկուել, ուրեմն ընդունում ենք բնակիչների թիւը կողոր թուով 15000: Կոտորածներից յետոյ սկսեց զօրեզ գաղթականութիւն քաղաքից դուրս և գիւղերից քաղաք: Մասնաւոր կարող է գաղթականութեան դիմած լինել աբգարնակութեան  $\frac{1}{3}$  մասը:

Ուրեմն Շուշում մօտաւորապէս ապրում են այժմ 10,000 հայ: Տեսնենք դաշնակցութեան ուցեպառվ քանի տոկոսն ընդունակ կը լինէր ընտրութիւններին մասնակցելու:

Դիմենք ստատիստիկային: Թսան տարեկանից ցած հասակ ունեցողները կազմում են Բուլղարիայում 50,70/0, Անդղիայում 45,20/0, Գերմանիայում 44,90/0, Շապոնիայում 43,20/0, իսկ Ֆրանսիայում ամենաքիչ տոկոսը՝ 34,70/0: (Custav Schmolli., Crundriss d. allg. Volkswirthschaftsl. 1901, հատոր I երես 160): Բուլղարիան առաջին տեղն է բռնում, Ֆրանսիան վերջին: Դիցուք Շուշին էլ հաւասար է Բուլղարիային իր երեխանուրի առատ քանակութեամբ: Ապա ուրեմն Շուշում ընտրութիւններին պիտի մասնակցէր առնուազն 500/0-ը՝ 20 տարեկան հասակից վեր հաշուած, այսինքն մօտաւորապէս 5000 մարդ. մինչեւ թերթիկները բաժանուած էին 3000-մէջ, կը նշանակէ ընտրութիւններն անկարելի է հաւասար համարել քանի որ քաղաքացիների մօտ 40% 0-ը, հաւանականորէն և աւելի, զրկուել է ձայնատութեան իրաւունքից: Իբրև անհատ, ես գիտեմ դէպքեր, որ մի քանի բնակիչներ ընտրողական թերթիկներ չեն ստացել:

դ. Ինըն ըստինքեան հասկանալի է, որ այդ ոչ ընդհանուր ընտրութիւնները չեն կարող համարուել և հաւասար, անի որ քաղաքացիների մի մասը զրկուած էր քուէ տալու հնարաւո-

բութիւնից, մինչդեռ միւս մասը վայելում է այդ իրաւունքը, իսկ կանայք միանգամայն զրկուած էին ընտրուելու իրաւունքից:

Աւելորդ չէր լինի այստեղ մի քանի երկրորդական մանրամասնութիւններ ևս յիշել «Ապառաժեան» ուրոյն քառանդամ սիստեմի մասին: Թերթիկների վրայ չէր յիշուած 15 հոգու ընտրութեան նպատակը. այդ ծանր հոգսի խնամատարութիւնը թողնուած էր թերթատարներին: Այս հանգամանքն էլ նամանաւանդ կարեւոր է այն տեսակէտից, որ թաղային ժողովներում ընդհանուր առմամբ հազիւ եղած լինեն 300—400 հոգի. պարզ է, որ միւսներին անհրաժեշտ էր ծանօթացնել ընտրութիւնների նպատակի հետ: Զարմանալի չէ ուրիշն, որ այսօր ժողովրդի մի խոշոր առկուսը սիմանգամայն մթութեան մէջ է խարխափում, գործադիր մարմնի կատարելիք դերի մասին:

Չափաղանց տարօրինակ էր նաև քուէներ հաւաքելու չափանձ ձևը, որոշ ժամանակին թղթատարներն սկսում են կըրկին պատել քաղաքը և յետ ստանալ թերթիկները «ծրարներում» (սա գաղտնի քուէարկութիւն է! Sic!): Ովկ կարող էր երաշխաւորել որ նրանք չէին փոփոխի այդ ծրարներն իրենց ցանկացած մարդկանց քուէներով: Ո՞րտեղ և որ ժամանակ էք լսել ընթերցնել, ընտրութիւնների այս այլասեռուած եղանակի մասին:\*)

Կարծում եմ, «հաւաքողական» ընտրութիւնները չպէտք է խանգարէին «Ապառաժ»-ին յետ ստանալու այդ ձևով 3000 թերթիկները. սակայն հաւաքուած էր միայն 2284 հատ. պատճառն անհասկանալի:

Եւ սա կոչւում է քաւանդամ սիստեմ! Ողորմելի՛ ընտրութիւններ, որոնց ստեղծագործութեան համար զաշնակցութեան դաւառական տաղանդները մօտ երեք ամիս է հալ ու մաշ են լինում «Ապառաժ»-ի ալքիմիական լարորատորիայում և որոնցից կարելի է հանել միայն մի պարզ տրամադրանական եզրակացութիւն, որ դաշնակցութիւնը գործի (և ոչ խօսքի!) մէջ նոյնքան տիպիկական ուրոյն հասկացողութիւն ունի քառանդամ սիստեմի, ոքան և ագրարային, կուլտուրաբեգերական և այլ խնդիրների մասին, այսինքն՝ ամեն ինչի վրայ դրօշմում է հայկական տիրացուական-բարբարոս բիւրոկրատիզմի կնիքը:

\*) Ամեն գաղափար, սկզբունք այլասեռել, խեղաթիւրել, կարրիկատուրացին դարձնելով «հայացնել»—դա գաշնակցական ինքնուրոյն սիստեմն է. այս պէս նրանք սրբազրումն և փիլիսոփայութիւնը, և սօցիալզմը և զէմօնկրատիզմը, և մտքի ազատութիւնը, և կուլտուրան, և քառանդամ ընտրութիւնը և այլն. Ամեն ըան պիտիվայր, կեղծ, այլանգակ, իմաստակօրէն.. .

## IV

Դաշնակցութեան ներկայացուցիչը պարզեց ժողովի առջև  
15-ի խորհրդի նպատակը. այս խորհուրդը ինքնապաշտպանու-  
թեան գործադիր մարմինն է և ունի կատարելու հիտեեալ դե-  
րը. նախ՝ ստանձնելու դաշնակցութիւնից ինքնապաշտպանու-  
թեան հաշիւը, երկրորդ՝ վարելու իր պատասխանատւութեամբ  
ինքնապաշտպանութիւնը, երրորդ՝ կազմակերպելու «օրէնսդիր  
մարմնի» ընտրութիւնները: Քաղաքացիներն առաջին երկու  
կէտերի մասին դեռ սինչեւ ընտրութիւնները գաղափար ունէին,  
բայց այժմ ընտրութիւններից յետոյ, դաշնակցութեան թելա-  
դրութեամբ 15-ի խորհրդին արւում է մի նոր, անծանօթ լի-  
ազօրութիւն, այն է ձեռնարկել ներկայացուցչական ժողովի  
ընտրութիւններին:

Սկզբունքային տեսակէտից դաշնակցութեան այս մանէօվ-  
ըը միանգամայն անհասկանալի է. «քառանդամ սիստեմով»  
ընտրուում է ինքնապաշտպանութեան վարչութիւն, որը  
պէտք է լիազօրութեամբ և իր պատասխանատւութեամբ վարի  
«գործը», նշանակում է պիտի կազմի բիւդֆէ, հարկահանու-  
թեան սիստեմ, միլիցիա և այլն: Եւ յանկարծակի այդ նոյն  
վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպւում են օ-  
րէնսդիր մարմնի կամ ներկայացուցչական ժողովի ընտրու-  
թիւնները: Ի՞նչ ֆունկցիաներ ունի վարելու ներկայացուցչա-  
կան ժողովը: Եթէ վերջինս իրաւ ժողովրդի ներկայացուցչու-  
թիւն լինի, ապա ուրեմն գործեր ստանձնելու և տնօրիննելու  
միակ գերիշխանութիւնը վերապահելում է նրան, ինչպէս արել  
է այդ Շուշու ներկայացուցչական ժողովը անցեալ տարի:  
Իր ժողովրդական ֆոքրիկ սէյմ, նա լիազօր իրաւունք ունի  
իր մեծամասնութեան միջից ընտրել ինքնապաշտպանութեան  
«գործադիր մարմինն» ու այլ մարմիններ և սահմանել սրանց  
համար օրէնքներ ու կանոններ, կազմել բիւդֆէ, հարկահանու-  
թեան սիստեմ և այլն: Ժողովուրդն ընտրում է պարլամենտը,  
իսկ վերջինս վարչութիւնը. միթէ այս ծառծմուած ճշշ-  
մարտութիւնը մինչև օրս պարզ չէ դաշնակցական շէֆերի հա-  
մար: Ցոյց տուէր մի պարլամենտարական երկիր, որտեղ պառ-  
անդամ սիստեմով նախ կառավարութիւնն են ընտրում և ա-  
պա պարլամենտը, և ես կը լոեմ: Պատմութիւնը դիտէ միայն  
մի հղակի օրինակ, այն է նապոլէօն 181-ի ընտրութիւնները  
6,000,000 ձայնով: Եթէ դաշնակցութիւնը ներկայ դէպուում

տրամադրութիւն ունի լողալ բոնապարտիզմի ջրերում, դա  
այլ խնդիր է:

Սակայն ի նկատի ունենալով մի այլ հանգամանք, ժողո-  
վըն եկաւ հետեւեալ եղրակացութիւն. քանի որ ինքնապաշտ-  
պանութեան հաշիւները դաշնակցութիւնից կարող է օրինա-  
ւոր ճանապարհով ստանալ միայն ժողովրդի իսկական ներկա-  
յացուցչութիւնը, քանի որ ինքնապաշտպանութեան գործում  
միակ գերիշխողն ու պատասխանատուն կարող է լինել էլի ներ-  
կայացուցչութիւնը, անհրաժեշտ է սահմանափակել 15-ի խոր-  
հրդի լիազօրութիւններըև տալ նրան միայն իրաւոնք ձեռնար-  
կելու ներկայացուցչական III ժողովի ընտրութիւններին: Իսկ  
մինչև այն թողնել դաշնակցութեան՝ ինքնապաշտպանութեան  
հոգաց: Դաշնակցական ներկայացուցչիները տրամարանօրէն  
ոչ մի առարկութիւն չկարողացան լոյս աշխարհ հանել, այլ  
միայն խոստացան դնել խնդիրը «Ապառաժի» առաջ:

Դեկտեմբերի 27-ին Ապառաժը հրապարակ հանեց իր  
վճիրը: Նոյն օրը թաղային ժողովներում պաշտօնապէս յայ-  
տարարուեց, որ ապառաժը վերջնականապէս որոշել է 15-ի  
խորհրդին յանձնելու ինքնապաշտպանութեան հաշիւներն ու  
գործը և արածազրութիւն չունի սպասել ներկայացուցչական  
ժողովի բացման: Սակայն ինչ պատճառաբանութեամբ. միթէ  
այդ կուսակցութիւնը, որ միահեծանօրէն վարել է գործը ա-  
ւելի քան երկու տարի, այլևս այնքան անզօր է, որ շնորք չու-  
նի սպասել մի օր անգամ. կամ գուցէ գործն այնքան քացա-  
խել ու ջուր է ծծել, որ Ապառաժը ստիպուած է փութկո-  
տութեամբ փաթաթել գործը տարբեր ու հետերոգէն տար-  
բերեց բաղկացած մի ընտրովի կառավարութեան վզին, հե-  
ռացնելով անվանագ իրանից ամբողջ գործի պատասխանա-  
տութիւնը: Այնուամենայնիւ դաշնակցութիւնը չկամեցաւ  
օլիմպիական բարձրութիւնից պատճառաբանել իր կատարած  
քայլերը, այլ նազանքով շոայլեց հանդիսականների առջև  
ինքնապաշտպանութիւնը ժողովրդին յանձնելու անկեղծ փա-  
փազին նուիրած ապոլոփիայով և դիմեց իր աւանդական  
սովորական տրամարանութեան: «Վտանգը մօտ է, թող կազ-  
մալուծուած ժողովուրդը շուտափոյթ սթափուի, կազմակերպ-  
ուի իր ուժերն ու իր գլխի ճարը տեսնի»:

Կրկն հայ-թուրքական կոտորածների խրտուիլակներն  
են, որ պիտի վախեցնեն ժողովրդին, այլ ոչ համոզեցուցիչ  
փստաեր ու պատճառներ: Սակայն Վերին եկեղեցու նահա-  
տակի թաղերի «անգիտակից» ժողովուրդը միանալով մաս-  
նաւոր խորհրդակցական ժողովի որոշման, պահանջեց սահմա-

նափակել նորընտիր գործադիր մարմնի ֆունկցիաները լոկ ներկ. ժողովի ընտրութիւններով: Կը յամառի արգեօք դաշնակցութիւնն իր նախկին որոշման վրայ. այդ գէպքում ժողովրդի բոլոր խաւերի գործի պայքարը դաշնակցութեան դէմ անխուսափելի է: \*)

## V

Վերջը կարեոր է կանգ առնել մի քանի ակամայ խոստովանութիւնների վրայ, որ արեցին դաշնակցութեան ներկայացուցիչները. նրանք միաբերան պնդում էին ընտրութիւնների վաւերացման վրայ, առարկելով, որ ժողովուրդը դեռ անզիտակից է, անհատուն՝ և որ աւելի լաւ ձեմի ընտրութիւնների հաղիւ թէ կարելի լինէր ձեռնարկել նրա մէջ: Ժողովուրդը տգէտ է, անհատուն: Ինչու որովհետև Հեղափոխական Դաշնակցութիւնը միացած տիրապետող վաշխառամոլ ու բէդական դասակարգերի հետ կառւել է նոյն ժողովրդի ազատագրական ձգտումների դէմ և խեղդել ամեն անգամ, երբ նա կամեցել է իր զլսի տէրը լինել, նրա արդար բողոքը, նրա ինքնառողման տենչը. (բաւական է յիշել Շուշու ներկայացուցական ժողովները). որովհետև նա զօրավարի բերանով խոստովանեց, որ յշեղափոխական պրոպագանդա մղելու ժամանակ չի ունեցել, այլ ստիպել է ժողովրդին գնել՝ փամփուշտ, հրացան և գնալ զիրքերը, թշնամուն դիմաւորելու»: Որովհետև սարսափած գիւղական ազգաբնակութիւնը տնքում էր իր ծոցում տաքացրած ազգային օպրիչներին ու զափթիւնների տակ. որովհետև բաշիրուզուկային արարողութիւնների տակ. որովհետև ամբողջ գիւղեր անպատիժ քայլայւում էին ամեն տեսակ օրինաւոր ու ապօրինի տուրքերից ու աւարից. որովհետև աշխատաւոր մասսաներին չթողին վերջը ոչինչ, բացի կեղտոտ լաթերից, ցնցոտիներից ու դատարկուած զարադամներից. որովհետև դաշնակցութեան դաժան դատարաններում, ինկվիզիտիններում, լուեցնում էին ամեն մի արդար բողոք, մեռցնում՝ ամէն մի ինքնուրոյնութիւն, որովհետև «դաշնակցական» գիւղերում միւս կուսակցութիւններին արգելուած իր մուտքը, դաշնակցական ամբոխին «իսելքից չհանելու, շմոլորեցներու» նպատակով, որովհետև ժողովրդի աշքի առաջ են կատարուել

\*) Դաշնակցական շէֆերից մէկը Վերին Թաղի ժողովում արտասանեց հետևեալ հոչակաւոր տենդենցը. «Ամա, համարեցիք այս ընտրութիւններն օրինաւոր և դաշնակցութեան վերջին բռնութիւն», Վերջին. Հաւատանք արգեօք:

Խնձորեսկի ու Ապարանի արիւնում դէպքերը. ինչու այսօր այս բոլորը մոռացութեան են տալիս զաշնակցութեան» ժողովրդասէր» ներկայացուցիչները և ուրանում՝ պատմութեան հասարակ այն դասը, թէ միայն աղատութեան և ոչ բռնութեան ծոցում է զարգանում ժողովրդի գիտակցութիւնը:

Ինչու զաշնակցութեան քարոզած մողերն զաղափարները ժողովրդի գերիշխանութեան մասին երկու տարի զանակոծւում էր, հարստահարւում՝ զաշնակցութեան թէ իդէօլոգիական և թէ ֆիզիքական արսենալով... և այս բոլորից յետոյ... ժողովուրդն անգիտակից է», ճիշտ նոյն առարկութիւնը, ինչ որ անում են իւնկերներն ու հարբող սպաներն իրանց մնզերի հետքերը ոչնչացնելու համար:

«Ժողովուրդը ձեզանից գանգատաւորէ», ասենք հէնց մի զառամեալ ծերունու բերանով, որ մասնակցում էր ժողովին: «Դուք ճիշտ է, պաշտպանել էք ժողովուրդը թուրքերի դէմ, բայց պնցել էք ձեր իրաւունքի սահմանները. զաշնակցութիւնը բռնութիւններ է կատարել և քաղաքում, և գիւղերում: Ժողովուրդը զախնում է պատմել դրանց մասին, բանալ իր սիրութ. պէտք է պատուի այն «փարզան» որ բաժանում է ձեզ և ժողովուրդին». և այն ժամանակ միայն մենք կը ծանօթանանք անգիտակից» ու «անհատուն» ժողովրդի մարտիրողոգիայի հետ, երբ կը յայտարարուի զաշնակցութեան կողմից անձի, խօսքի խղճի ու մտքի աղատութիւնը, երբ մեր առաջ «զաշնակցական» գիւղերը չեն կազմի մի terra incognita, որի սահմանները թեակոխելու իրաւունքը վայելում են միմիայն ընտիր ու արտօնեալ շէյխերը:

«Այսուհետև էլ չեն լինի բռնութիւններ, այսուհետև էլ չեն լինի պոլիցիական ճնշումներ, թող ժողովուրդը կազմակերպուի, գործի, որպէսզի կարողանայ ապագայում, եթէ դրացիներն անմիտ տեղը խախտեն խաղաղութիւնը, պաշտպանել իր կեանքը և չկոտորուել: Հակառակ դէպքում ձեզ կը կոտորեն ոչխարների պէս»—զաշնակցութեան հին հերոսի շրթունքներից թուած այս անկեղծ խոստովանութիւնը պէտք է լինի բիւրօյականները, որպէսզի վերջնականապէս համոզուէին, որ գրոնութիւններն ու պոլիցիական ճնշումները» կազմել են մինչեւ օրս զաշնակցութեան արտօնութիւնը, նրա սիստեմը, բեժիմը, էութիւնը, իսկ ֆրէյլինեան գրական շուկան հեղեղող փաստաբանութիւնները մտաւոր ու բարոյական սնանկութեան նշաններ են և ոչ թէ դէպի «աշխատաւոր մասսաները» տածած են թերային զթասրտութեան և գուրգուրանքի արտայատութիւն: Բաւական է, որքան մաշեցիք խեղճ ու դժբախտ պատա-

Նիների ուղեղը ձեր յեղափոխական ֆոկուսնիկութեամբ ու Փիզիարութեամբ, բաւական է, որքան խարեցիք ժողովրդին և ճղմեցիք ձեր երկաթեայ բոռնցքի մէջ նրա ազատութիւնը, Բաւական է որքան դեմօկրատիան կեղծեցիք դեմադուխայով։ Մի կողմ թողէք կեղծ ու պատիր ուրոյն «քառանդամ սիստեմ-ները», քօղարկուած ժողովրդատելութիւնը, զուլգուրտորէգերութիւնը, ճնշումները, մտրակը. ժողովրդի ստրկութեան շղթաների շունդը ձեզ քուն չպէտք է տայ, իսկ դուք... ինքնապաշտպանութեան ժողովրդականացման դիմակի տակ կրկին անդամ սարքում էք նորանոր դաւելը ու աֆերներ...»

Տուէք ժողովրդին իսկական ազատութիւն և ոչ թէ բիւրօկրատիական մամուլի տակից հանած թղթէ սահմանադրութիւններ ու քառանդամ սիստէմներ, առանց որ և է բովանդակութեան։

Հակառակ դէպքում մօտ է ժամը, երբ ձեր գիտալգօնների վրայից կը բարշեն հովովմէական տոգան և կը մերկանան վերջապէս ձեր մտաւոր—բարոյական այլանդակութիւնները։

Շուշի 1906<sup>29</sup>/XII

Մ. Դ.

Յ. Գ. Սակայն ի՞նչ կարող է անել մի դժբաղդ զօրավար իր անկեղծութեամբ, երբ նրան շրջապատող խորհրդականներն այլ տեսակ են ըմբռնում «աղատութիւնը»։ Զանցաւ մի օրդեկտեմբնը 28-ին դաշնակցական «ամբոխը» կատարեց իր առաջին դերիւտը շնորհած ազատութեան գրկում։ Թաղային ժողովուան ներկայ էր և «Մշակ»-ի թղթակից «Ոսկու Զօնը», որին վիճակուեց բոռնցքների տակ ստորագրել իր մի յօդուածի հերքումը, որ լոյս էր տեսել «Մշակ»-ի 282-րդ համարում, ներկայ ընտրութիւնների մասին։

Դժուար է նկարագրել նրա անելանելի դրութիւնը յեղափիսական դաշնակցութեան տրիբունալի առջև։ մինչեւ զայրացած «հրեշտակները» սմբակոծում էին նրան սպառնալիք-բերով, գլխաւոր շէֆը բաշուած մի անկիւն՝ խմբագրում էր թոռն ընկած որսի մասին դատավճիրու։

«Սահմանադրութեան» յայտարարման օրից մամուլի ազատութեան ասպարիզում սա առաջին քայլն չէ, որով բայլում է գաւառական դաշնակցութիւնն իր աշխարհահայեցողութեամբ։ Դեռ անցեալ տարի երկու ուրիշ թղթակիցներ ճաշակեցին ծեծը. որոնցից մէկը պաշտօնապէս բռնութեան հնաթարկուեց դաշնակցութեան դատարանում։ Ուրիշների շրթունքներին կողպէք դնելու այս մեթոսն այնքան սովորական է կարձել, որ հին փառքից հրաժարուելու համար, Ապառաժը, երեխ, դեռ կարօտ է երկար դաստիարակութեան։

Մ. Դ.